ԱՆՎԱՎՈՐ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՈՒՇ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԹԱՂՈՒՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԿՈՒՐԱՐԱՔՍՅԱՆ ՄԻՋԱԳԵՏՔՈՒՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ Բ.Վ.*

Կուրարաքսյան Միջագետքում ուշ բրոնզեդարյան դամբանադաշտերի մեջ առանձնանում են անվավոր փոխադրամիջոցի կամ վերջինիս փոխարինող մասի ուղեկցությամբ թաղումները, որոնց թիվը հասնում է երեսունվեցի (աղ. 1)[1]: Սույն ուսումնասիրության նպատակն է վեր հանել այդ դամբանների սոցիալ-ժողովրդագրական ուսումնասիրության խնդիրները, դրանց կրողների ներմշակութային և արտամշակութային կապերը, ինչպես նաև մի շարք այլ հարցեր:

Քննվող յուրաքանչյուր համայնքում անվավոր փոխադրամիջոցի ուղեկցությամբ կատարված թաղումը նույնանում է տվյալ համայնքում առանձնաշնորհ կարգավիճակ ենթադրող անձանց հետ: Հաշվելով դամբանադաշտի (համայնքի) կենսագործունեության և մահացության ցուցանիշը, ինչպես նաև առանձնաշնորհ կարգավիճակ ենթադրող անձանց թաղումների քանակը՝ կստանանք տվյալ համայնքում առանձնաշնորհ ունեցողների թիվը, որոնց թաղումները կատարվել են անվավոր փոխադրամիջոցի կամ դրան փոխարինող մասի (երբեմն մանրակերտի) ուղեկցությամբ:

Լճաշենում մ.թ.ա. XVI-XV դդ. միաժամանակ ապրած բնակչության միջին թիվը պետք է կազմեր մոտ 100 մարդ (n=22), իսկ Արթիկում՝ 10 (n=1),

---

* ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, կրտսեր գիտաշխատող, benik.vardanyan@iae.am, հոդվածի ընդունման օրը՝ 11.01.2019, տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, պատմ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Պ. Ավետիսյանը:

[1] Հոդվածը զեկուցվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի «Թաղման ծեսը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (Հայկական լեռնաշխարհ և Հարավային Կովկաս), 21-24 մայիս, 2019 գիտաժողովին:

Աղյուսակ 1. Անվավոր փոխադրամիջոցներ և դրանց փոխարինող մասերի ուղեկցությամբ դամբանադաշտեր

№	Դամբանադաշտ	Քանակը	Դամբ. քանակ.	№	Դամբանադաշտ	Քանակը	Դամբ. քանակ.
1.	Լճաշեն	11	~ 648	1.	Մեծամոր	1	~ 130
2.	Լոռի Բերդ	5[2]	112	2.	Քուչակ	1	անհայտ
3.	Գեղարոտ	1	7	3.	Արթիկ	4	640
4.	Շիրակավան	2	76	4.	Պախրալո	1	անհայտ
5.	Բերիկլդեեբի	1	4	5.	Ցիթշիհուրի	1	անհայտ
6.	Ցիտելգորեբի	2	2	6.	Ն. Գետաշեն	1	անհայտ
7.	Ղարաջամիրլի	3	6	7.	Տոլորս	1	անհայտ
8.	Խանլար	2	150		Ընդամենը՝	10	
9.	Քեթի	1	22				
10.	Սաֆար Խարաբա	1	120				
11.	Վերին Նավեր	2	14				
12.	Ընդամենը՝	31					

XV-XIII դդ. Լճաշենում՝ մոտ 700 (n=165)[3], Արթիկում՝ 2300-2330 (n=629), իսկ XIII-IX դդ. և՛ Լճաշենում (n=2),[4] և՛ Արթիկում (n=11) նկատվում է բնակչության քանակի կտրուկ նվազում: Առանձնաշնորհ կարգավիճակ ենթադրող անձանց թաղումների քանակային հարաբերությունից ելնելով՝ կարող ենք նշել, որ Լճաշենում նշված ընթացքում դամբանադաշտում թաղվել է էլիտայի 6-8 սերնդի ներկայացուցիչ, իսկ Շիրակավանում և Արթիկում՝ մոտ 4-6 սերնդի (համայնքի կենսագործունեության միջին տևողությունը 200 տարի է): Ցուցանիշը համընկնում է դամբանադաշտերում անվավոր փոխադրամիջոցի կամ վերջինիս փոխարինող մասերով դամբանների, ինչպես նաև իշխանության այլ խորհրդանիշեր պարունակող դամբանների քանակի հետ:

---

[2] Պ.գ.թ. Ս. Դաեջյանի բանավոր հաղորդումը (10.01.2018):

[3] Լճաշենում մ.թ.ա. XV-XIII դդ. բնակչության քանակական աճի այս տվյալները համապատասխանում են ամրոց-բնակավայրի շերտագրությանը. ամրոցի 1-2, 4 կացարանների երրորդ շերտը հասնում է 1.5-2 մետրի, որտեղից հայտնաբերված խեցեղենը թվագրվում է ՈՒԲ երկրորդ փուլով: Սա խոսում է երկարատև բնակեցվածության մասին: **Ավետյան Վ.,** Սևանի ավազանի մշակույթը մ.թ.ա. III-II հազարամյակներում, Ե., 2003, էջ 33:

[4] Այս հաշվարկներն արված են Լճաշենի դամբարանադաշտի երկրորդ և երրորդ տեղամասի տվյալներով: Սակայն եթե հաշվարկի մեջ ներառվեին Հ. Մնացականյանի և Վ. Ավետյանի պեղած դամբանների հնամարդաբանական տվյալները, ապա պատկերը կտրուկ կփոխվեր:

Հարավային Կովկասում անվավոր փոխադրամիջոց պարունակող 41 դամբաններում 51%-ը տղամարդիկ են՝ թափքի կամ դիապատգարակի վրա, երբեմն նաև նստած դիրքով (21 աճյուն, 18-50 տ.): Ընտրույթում կանայք ներկայացված են 7.3%-ով (3 աճյուն, 18-30 տ.): Լճաշենի № 2 դամբանում փաստագրվել է երեք աճյուն սայլերի վրա և ևս 9՝ խցի տարբեր հատվածներում[5]: Բերիկլդեեբիի № 4 դամբանում սայլի վրա հանգչում էր 15-25 տ. կին, իսկ կառքի վրա՝ 30 տ. տղամարդ[6]: Վերջին երկու դամբանները և Ներքին Գետաշենի № 17-ը[7] խմբային թաղումներ են (7.3%), այն պարագայում երբ ընտրույթի 50%-ը անհատական է: Ընտրույթում որոշակի խումբ են կազմում դիակիզման եղանակով կատարված թաղումները (9.8%): Այդպիսիք են Օշականի № 30[8], Խանլարի-150[9], Լոռի Բերդի nos 2, 7[10] դամբանները:

Շիրակավանի № 44 դամբանում կառքի առեղի կողային հատվածներում դրված էր երկու երեխաների աճյուններ[11], ևս մեկ մանկական աճյուն հայտնի է Լճաշենի № 2 դամբանից[12]: Հատկանշական է նաև Վերին Նավերի № 15 դամբանաբլուրում փոխադրամիջոցի համատեքստում բացված երկու երեխայի թաղում[13]: Ըստ երևույթին, գործ ունենք առանձնաշնորհ կարգավիճակ ենթադրող հասակավոր տղամարդու և երկու երեխայի

---

[5] **Мнацаканян А.** Раскопки курганов на побережье оз. Севан в 1956 (Советская археология, далее – СА, 1957, 1 № 2, 46-148]; **Азизян Г.** Палеоантропологический материал из погребений у селения Лчашен [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1965, № 3, էջ 306-316].

[6] **Koridze I.** Der Kurgan 4 von Berikldeebi, in: Unterwegs zum Goldenen Vlies: Archäologische Funde aus Georgien, edited by A. Miron and W. Orthmann, Saarbrücken: Saarlandischer Kulturbesitz, 1995, pp. 109-110; **Mansfeld von G., Krozingen B.** Die „Königsgräber" von ALaca Höyök und ihre Beziehungen nach Kaukasien, in: Archäologische Mitteilungen aus Iran und Turan, Band 33, Berlin, 2001, S. 19-52.

[7] **Լալայան Ե.,** Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Ե., 1931, էջ 100-101:

[8] **Калантарян А., Пилипосян А., Мелконян У.** Среднебронзовое погребение, № 30, Ошакана (Археология, этнология, фольклористика Кавказа, Тбилиси, 2004, с. 69-71).

[9] **Гуммель Я.** Раскопки к юго-западу от Ханлара в 1941 г. (Вестник древней истории, далее – ВДИ, 1992, № 4, с. 5-12; Дополнения Б.Б. Пиотровского, там же, с. 13-15).

[10] **Деведжян С.** Лори Берд, Е., 1981, с. 25-30.

[11] **Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ.,** Հին Շիրակավան, Ե., 2002, էջ 33-34:

[12] **Мнацаканян А.** Раскопки курганов на побережье оз. Севан в 1956, СА, 1957, с. 118.

[13] **Սիմոնյան Հ.,** Վերին Նավեր, Գիրք Ա (1976-90 թթ. պեղումների արդյունքները), Ե., 2006, էջ 105:

հուղարկավորության (իմա՝ զոհաբերության) ծեսի հետ, որը հաստատվում է նաև համաժամանակյա Սինտաշյան մշակույթի տվյալներով, որտեղ անվավոր փոխադրամիջոցները և վերջինիս մասերը փաստագրվում են տղամարդկանց և երեխաների համատեղ դամբաններում, իսկ եթե կանանց դամբաններում, ապա դրանք համատեղ խմբային թաղումներ են[14]:

Անվավոր փոխադրամիջոցների ուղեկցությամբ դամբաններում փաստագրվում են զոհաբերված և լծկան կենդանիների մնացորդներ[15]: Լճաշենի nos 1-2 դամբանների քառանիվ սայլերի եռանկյունաձև առեղի և լուծի մոտ հայտնաբերվել են երկու խոշոր եղջերավորների երկուական գանգեր[16]: Լճաշենի № 5 դամբանում մեկ երկանիվ սայլի դիմաց դրված էր երկուական ձիու, ԽԵԱ և 13 խոզի գանգ[17]: Շիրակավանի № 44 դամբանում առեղի երկու կողմերում դրված էր ձիու երկու գանգ[18]: Բերիկլդեեբիի № 4 դամբանում կառքի դիմաց գտնվեց երկու ձիու, իսկ սայլի մոտ՝ 4 եզան գանգ[19]: Գեղարոտի № 3 դամբանաբլուրում երկու ձիերի բերաններում դրված էր անվակաձև այտաճանով սանձ[20]: Ցիտելգորեբիի (Նովայա Ուլ-

---

[14] **Берсенева Н.** О подходах к изучению милитаризации Синташтинского общества (Краткие сообщения Института археологии, вып. 231, М., 2013, с. 39, табл. 1); **Чечушков И.** Колесницы евразийских степей эпохи бронзы (Вестник археологии, антропологии и этнографии, Тюмень, вып. 2, 2011 (15), с. 59).

[15] Այս երկու եզրույթները տարբերակվում են հետևյալ կերպ. այն կենդանիները, որոնք դամբանախցում փաստագրվել են ըստ ունեցած գործառույթի համապատասխան վայրում (առեղի դիմաց), համարվում են լծկան կենդանիներ (ձի, խոշոր եղջերավորներ, եղջերու), իսկ այն կենդանիները, որոնք փաստագրվել են խցի տարբեր հատվածներում կամ տարաների մեջ, համարվում են զոհաբերված, սակայն չենք բացառում նաև դրանց փոխկապակցվածությունը:

[16] **Мнацаканян А.** Древние повозки из курганов бронзового века на побережье оз. Севан (СА, № 2, 1961, с. 68). Սրանք պատկանում են եռանկյունաձև առեղով, երկանիվ սայլերի ձիերին: Փոխադրամիջոցների կառուցվածքի մասին տե՛ս **Есаян С.** Из истории колесного транспорта древней Армении (ՊԲՀ, 1960, № 3, էջ 141-151).

[17] **Մնացականյան Հ.,** Լճաշենի մշակույթի զարգացման հիմնական էտապները (ՊԲՀ, 1965, № 2, էջ 108); **Ավետյան Վ.,** նշվ. աշխ., էջ 60, 61-62, 66; **Պետրոսյան Լ.,** Լճաշենի դամբանադաշտը, Ե., 2018, աղ. 139-148:

[18] **Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 33:

[19] **Koridze I.** Der Kurgan 4 von Berikldeebi, in: Unterwegs zum Goldenen Vlies: Archäologische Funde aus Georgien, edited by A. Miron and W. Orthmann, Saarbrücken: 1995, pp. 109-110; **Mansfeld G., Krozingen B.** Die „Königsgräber" von ALaca Höyök und ihre Beziehungen nach Kaukasien, in: Archäologische Mitteilungen aus Iran und Turan, Band 33, Berlin, 2001, S. 52.

[20] **Badalyan R., Smith A.** The Kurgans of Gegharot: A Preliminary Report on the Results of the 2013-14 Excavations of Project ArAGATS, in: Bridging Times and Spaces, Fest-

յանովկա) № 2 դամբանախցում փաստագրվեցին ձիերի երկու գանգեր, ինչպես նաև երեք խոշոր և հինգ մանր եղջերավորների մնացորդներ[21]: Սաֆար Խարաբայի № 30 դամբանում դրված էր ընդամենը մեկ գառան կմախք[22]: Հետաքրքրական է նաև Քեթիի № 21 դամբանը, որտեղ փաստագրվեց մեկ ձիու և քուռակի կմախք[23]: Դատելով հանդիպման հաճախականությունից՝ կարող ենք ենթադրել, որ քառանիվ սայլերը լծված են եղել երկուական խոշոր եղջերավորներով, իսկ երկանիվ սայլերը և կառքերը՝ երկուսից-չորս ձիերով[24] (աղ. 2): Տարածաշրջանում իր ծեսով և կառուցվածքով բացառիկ է Խանլարի № 150 դամբանի երկու եղջերուներով լծված քառանիվ սայլը, որտեղ փաստագրվել են նաև տարատեսակ զոհաբերված կենդանիներով (օձ, շուն, խոզ, թռչուն և այլն)[25]:

Մ. Պոգրեբովան այս թաղումներում էթնիկական (խեթական) հետք է տեսնում[26], իսկ Մ. Գուսեինովան և Ի. Ալեիվը Ղարաջամիրլիի դամբանադաշտում հայտնաբերված փոխադրամիջոցների առեղին ամրացված եղջերուի պատկերով շտանդարտի առկայությամբ փորձում են հիմնավորել քննվող տարածքներում եղջերուի՝ որպես լծկան կենդանի լինելու իրողու-

---

schrift in Honour of Gregory E. Areshian on the Occasion of His Sixty-Fifth Birthday, Oxford, 2017, Fig. 9.

[21] **Abramishvili R., Abramishvili M.** Late Bronze Age Barrows at Tsitelgori, in: Archaeology in Southern Caucasus: Perspectives from Georgia, Ancient Near Eastern Studies, Sup. 19, Peeters, Leuven-Paris-Dudley, MA., 2008, p. 351-363, Fig. 7-8; **Дедабришвили Ш.** Курганы Алазанской долины (Труды кахетской археологической экспедиции) II, Тбилиси, 1979, с. 17.

[22] **Narimanishvili G.** Trialeti in the 15th and 14th centuries BC, Rescue Archaeology in Georgia: Baku-Tbilisi-Ceyhan South Caucasian Pipeline, p. 313-369, Tabl. XXV-XXVI.

[23] **Петросян Л.** Раскопки памятников Кети и Воскеаска III-I тыс. до н.э., Е., 1989, с. 55-56.

[24] Ձիու քառատրոփ վազքի առավելագույն արագության ժամանակ վերջինիս և կառքի դիմամասի միջև հեռավորությունը 50սմ է, իսկ Լճաշենի քննվող դամբաններից հայտնաբերված ձիերի երկարությունը տատանվում է 125-135սմ միջակայքում: Հետևաբար, երկու ձիով լծվելու պարագայում առեղի երկարությունը պետք է կազմեր առնվազն 180սմ, իսկ Լճաշենում առեղի երկարությունը հասնում է 3-4.5 մ-ի: Կարծում ենք, Լճաշենի կառքերը հիմնականում լծված են եղել չորսական ձիերով: Հարավային Կովկասի բրոնզեդարյան փոխադրամիջոցների և լծկան կենդանիների ընտելացման հարցի շուրջ տե՛ս **Boroffka N.** Nutzung der tierischen Kraft und Entwicklung der Anschirrung // Rad und Wagen, Der Unsprung einer Inovation. Wagen im Vorderen Orient und Europa, Oldenburg, 2004, S. 467-480.

[25] **Гуммель Я.**, նշվ. աշխ., **Гусейнова М., Алиев И.** Среднебронзовые курганы Гараджамирли Шамкирского района Азербайджана // Səmkik: Arxeoloji Irsi Tarixi Və Memarlii, IBaki, 2008, s. 108-129.

[26] **Погребова М.** К особенностям культа оленя на Южном Кавказе. Миф 7, София, 2001.

թյունը[27]: Կարծում ենք, Խանլարի nos 149-150 դամբաններում եղջերուներով լծված սայլի, ձիու, օձի, վարազի և այլ կենդանիների համատեղ հանդիպումը պետք է բացատրել տարածաշրջանային մի առասպելով, որի մի այլ դրսևորումը տեսնում ենք Լոռի բերդի, Ախթալայի, Խաչբուլաղի, Թլիի երկաթեդարյան բրոնզե գոտիների պատկերագրության վրա, որտեղ կառքի առջևից անցնում եմ ձիեր, եղջերուներ, վարազ, շուն և այլ կենդանիներ[28]:

Այսպիսով՝ հնագիտորեն փաստագրված իրավիճակը համապատասխանում է խեթական և հնդիրանական ծիսական տեքստերից հայտնի անվավոր փոխադրամիջոցների դասակարգման համակարգին, համաձայն որի՝ կառքերը և երկանիվ սայլերը պետք է լծվեին ձիերով և օգտագործվեին ծիսական արարողությունների ժամանակ[29], իսկ քառանիվ սայլերը՝ ցլերով կամ եզներով[30]:

Հաջորդ հանգամանքը, որ կուզենայինք առանձնացնել, ուշ բրոնզի դարում միայն փոխադրամիջոցների կամ վերջինիս փոխարինող մասի ուղեկցությամբ դամբաններում փաստագրվող անվակաձև այտաճանով սանձերն են (նկ. 1ա): Միջերկրականի արևելյան ավազանում, Փոքր Ասիայում և հարավռուսաստանյան տափաստաններում առաջին կառքերի հետ հանդիպող սանձերը ոսկրից կամ մետաղից էին, որոնք ունեին անվակաձև կառուցվածք[31]: Հարավային Կովկասում փաստագրված վաղագույն սանձերը և կառքերը միջակա դիրք են գրավում մի կողմից՝ հարավռուսաստանյան տափաստանային մշակույթների, մյուս կողմից՝ Միջերկրա-

---

[27] **Гусейнова М., Алиев И.**, նշվ. աշխ., էջ 125:

[28] **Esayan S.** Gürtelbleche der älteren Eisenzeit in Armenien //Beiträge zur Allgemeinen und Vergleichenden Archäologie, München, Band 6, 1984, S. 97-199, Abb-12, 38a. 14, 46, 47.

[29] Ուշագրավ է, որ եղջերուներով լծված հայտնի մեկ այլ սայլ փաստագրվել է Ֆրանսիայի հյուսիսում (Վիլեմանոշի մարզ) մ.թ.ա. II-I հազարամյակի սահմանագլխի իշխանական դամբանում: Տե՛ս **Chevrier S.** Des animaux et des hommes inhumés dans une fosse à Villemanoche (Yonne): un cas particulier de pratiques funéraires au second âge du Fer dans le Sénonais in: Rencontre autour de l'animal en contexte funéraire Actes de la Rencontre de Saint-Germain-en-Laye des 30 et 31 mars 2012, 2014, p. 63-84, Fig. 14.

[30] **Гамкрелидзе Т., Иванов В.** Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тбилиси, 1984, с. 725-726.

[31] **Epimachov A., Korjakova L.** Streitwagen der eurasischen Steppe in der Bronzezeit: das Wolga-Uralgebirge und Kasachstan // Rad und Wagen, Der Unsprung einer Innovation Wagen im Vorderen Orient und Europa, Oldenburg, 2004, S. 221-237, 226.

կանի արևելյան ավազանի երկրների օրինակների միջև[32]: Յ. Պոտրատցը գտնում է, որ Միջերկրականի արևելյան և հարավային ավազանում անվակաձև այտաճանով սանձերը կարող էին հայտնվել ոչ ուշ, քան մ.թ.ա. XVII-XVI դդ., ընդ որում, դրանց նախահայրենիքը տեսնում էր Հարավային Կովկասում կամ Իրանի հյուսիս-արևմուտքում[33]: Հայաստանի անվակաձև այտաճանով սանձերի լավագույն զուգահեռները Միջերկրականի արևելյան ավազանում հայտնի են Թել Էլ-Ամառնա (nos 48, 15, 11 սենյակի պատի տակ, կառքի մասերի հետ չորսական սանձեր[34]), Գազայի II շերտ (վաղ հիքսոսյան շրջան)[35], Թելլ Էլ-Հաբբադ (Իրաք)[36] և Ռաս-Շամրա (Ուգարիթ)[37] հնավայրերից (քարտեզ 1): Վերջիններս բացառիկ օրինակներ են ինչպես տվյալ տարածքների համար, այնպես էլ ժամանակաշրջանի: Ի տարբերություն Միջերկրականի արևելյան ավազանից հայտնի սանձերի՝ մեր օրինակները փաստագրվել են գլխավորապես բրոնզեդարյան դամ-

---

[32] **Nioradze G.** Der Verwahfund von Kvemo-Sasirethi (Georgien), Eurasia Septentrionalis Antiqua, VIII, Zeitschrift für Erforschung der Osteuropäischen und Nordasiatischen Archäologie und Ethnographie, Helsninki, 1932, S. 82-97; **Potratz J.** Die Pferdegebisse des zwschenstromländischen Raumes, Archiv für Orientalforschung, B., Heft ½, 1941, S. 10-13; **Եսայան Ս.,** Կառամարտիկ զորամասերը և հեծելազորը Հին Հայաստանում, Ե., 1994, էջ 39-44, **Penner S.** Schliemanns Schachtgräberrund und der europäische Nordosten. Studien zur Herkunft der frühmykenischen Streitwagenausstattung, Bonn, Habelt, 1998, S. 98-100.

[33] Potratz 1941, 12; Քննարկումը տե՛ս **Penner S.** Schliemanns Schachtgräberrund und der europäische Nordosten. Studien zur Herkunft der frühmykenischen Streitwagenausstattung, Bonn, Habelt, 1998, S. 98-100. Վերջինս կարծում է, որ առաջավորասիա-եգիպտա-հունական անվակաձև այտաճանով սանձերը ամենավաղ օրինակներն են, այնուհետև գալիս են Հյուսիսային և Հարավային Կովկասի, ապա նոր Լուրիստանի օրինակները:

[34] **Borchart L.** Ausgrabungen in Tell El-Amarna 1911, in MGOD 46, 1911, S. 25.

[35] **Potratz J.** Die Pferdegebisse, S. 11, Abb. 15. 1070 շերտից հայտնի է ևս մեկ անվակաձև այտաճանով սանձ: **Penner S.** 1998, 95. Պեղումների արդյունքները տե՛ս ծնթ. 204:

[36] Գտնվել է 1980 թվականին: Համատեքստը՝ անհայտ, ուղեկցող նյութը՝ կասսիտական ժամանակաշրջանի խեցեղեն (մ.թ.ա. 1580-1161): **Littauer M.A., Crouwel J.** Pair of Horse Bits of the Second Millennium B.C. from Iraq, Iraq, Vol. 50, 1988, pp. 169-171, 169, Abb. 1, Taf. 12a.

[37] Պոտրատցը 1966 թվականին արդեն էլ Ամարնայի, Ռաս Շամրայի օրինակները թվագրում էր մ.թ.ա. XV դարով: **Potratz J.,** 1966, 116:

բանային համալիրներում[38]: Ս. Եսայանի դասակարգմամբ՝ քննվող սանձերը ներկայացնում են Հայաստանից հայտնի սանձերի վաղ խումբը (տիպ I)[39], որոնք երբեմն նաև կոչում են «առաջավորասիական տիպի»[40]: Վերջիններիս տարածման ժամանակաշրջանն ընդունված է համարել մ.թ.ա. XIV- XIII դդ.[41]:

Ավելին, Օ. Խնկիկյանը, ապա Լ. Պետրոսյանը Շիրակավանի nos 44 և 86ա դամբանների սանձերը չեն համարում թվագրող իրեր, քանի որ վերջիններս իբր հայտնի են նաև Լոռի Բերդի առաջին հազարամյակի դամբաններից[42]: Սակայն, ըստ Ս. Դևեջյանի բանավոր ծանոթագրության, Լոռի Բերդի և ոչ մի դամբանում չեն գտնվել նմանատիպ իրեր[43], ուստի Շիրակավանի № 86ա դամբանի օրինակը ևս պետք է թվագրել մ.թ.ա. XIV-XIII դդ.[44]: Անվակաձև այտաճանով սանձերի վաղագույն օրինակ ընդունում ենք մ.թ.ա XV դարի առաջին կեսով թվագրվող Լճաշենի nos 97, 10, 5 դամբանի օրինակը: № 97 օրինակը հայտնաբերվել է եռանկյունաձև առեղով երկանիվ սայլի, միտանիական կնիքի և այլ լևանտյան ծագման (համապատասպանաբար՝ ազդեցության) իրերի հետ[45]: Այն երկմաս է, որի հանվածքում տեսանելի է չորս շրջան, իսկ դրանց միջակայքում եռանկյունաձև հանվածքներ են: Լճաշենի № 10 դամբանի օրինակը, որը փաստագրվել էր երկանիվ ռազմակառքի համատեքստում, սկավառակի

---

[38] Տե՛ս **Pizchelauri K.** Waffen der Bronzezeit aus Ost-Georgien in: Archäologie in Eurasien, Band 4, Espelkamp, 1997, S. 28, Taf. 91. Լճաշեն դամբ. nos 1, 2, 3, 5, 8, 9, 10, 95: **Պետրոսյան Լ.** 2018, 116:

[39] **Եսայան Ս.,** նշվ. աշխ., էջ 39:

[40] **Мартиросян А.** Армения в эпоху бронзы и раннего железа, Е., 1964, 100. Հ. Մարտիրոսյանը դասակարգել է Լճաշենից իրեն հայտնի 5 օրինակները երեք խմբի, որում լճաշենյան օրինակները մոտեցնում է քվեմոսասիրեթյան գանձի օրինակներին: **Хачатрян Т.** Материальная культура древнего Артика, Е., 1964, табл. 30; **Хачатрян Т**. Древняя культура Ширака, Е., 1975, 218.

[41] **Picchkelauri K.,** 1997, 28; **Султанишвили В.** Удила и псалии раннего этапа поздней бронзы (XV-XIII в. до. н.э.) на территории Восточной Грузии (Археология, этнология, фольклористика Кавказа, Баку, 2005, с. 166); Penner 1998, 104, Taf. 62.

[42] **Թորոսյան Ռ., Խնիկյան Օ., Պետրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 102; տե՛ս նաև **Պետրոսյան Լ.**, էջ 116-117:

[43] Պ.գ.թ. Ս. Դևեջյանի բանավոր հաղորդումը (21.04.2018):

[44] **Թորոսյան Ռ., Խնիկյան Օ., Պետրոսյան Լ.**, նշվ. աշխ. (սանձը կարող էր պահպանվել մինչև մ.թ.ա. IX-VIII դդ. երկարատև կիրառության շնորհիվ):

[45] **Ավետյան Վ.,** նշվ. աշխ., էջ 66-67, աղ. XXXI, 2, XXXII, 5, 14, XXXIII 2, L 3-4; **Պետրոսյան Լ.,** աղ. 161-164:

կողային հատվածներում ունի ուղղանկյունաձև երկու ելուս, որ արված են տաք մետաղը սուր գործիքով դեպի դուրս սեղմելու եղանակով: Դրա շնորհիվ առաջացած անցքով սանձը միանում էր ձիու գլխակապի հետ՝ դյուրացնելով կառավարումը (աղ. III, 1): Լճաշենի քննվող օրինակի թվագրությունը հաստատվում է նաև Գեղարոտի № 3 դամբանաբլուրի օրինակի մ.թ.ա. XV-XIV դդ. թվագրությամբ[46] (աղ. III, 2): Ուշագրավ է, որ Լճաշենի № 5 դամբանում փաստագրված երկու սանձերից մեկի երախճանը կրկնում էր նույն դամբանի անվակաձև այտաճանով սանձի երախճանին[47]: Այսպիսով, կարող ենք նշել, որ անվակաձև այտաճանով սանձերը Կուրարաքսյան Միջագետքի ուշ բրոնզի դարաշրջանում օգտագործվել է միայն կառքերին և երկանիվ սայլերին լծված ձիերին լծելու ժամանակ: Կարծում ենք, առկա է որոշակի գաղափարական ծանրաբեռնվածություն անվակաձև սանձի (իմա՝ արևի նշան), ձիու և կառքի գաղափարների միջև[48]:

Ս. Եսայանը նշում է, որ երկաթի դարաշրջանի թաղման ծեսում այլևս չեն փաստագրվում անվավոր փոխադրամիջոցներ (կամ վերջինիս փոխարինող մասեր)՝ պատճառաբանելով հնագիտացումով: Երկաթի դարում այն հանդես է գալիս միայն գոտիների, խեցեղեն առարկաների վրա և մանրակերտների տեսքով, սակայն փորձ չի արվում մեկնաբանել այս իրողությունը[49]: Կարծում ենք՝ պատճառը թաղման ծեսում տեղի ունեցած

---

[46] **Badalyan R., Smith A.,** 2017, Fig. 9.

[47] **Պետրոսյան L.,** նշվ. աշխ., աղ. 143, 4: Նույն երախճանն ուներ նաև Օշականի միջին բրոնզի դարի վերջն ազդարարող և ուշ բրոնզի դարին բնորոշ գույքի համակազմով № 30 դամբանի օրինակը, որտեղ փաստագրված թաղման ծեսը, գույքը կասկած չեն թողնում փոխադրամիջոցի ուղեկցությամբ թաղման առկայության մասին: Калантарян и др., 2004, с. 69-71. Տիպաբանական նույն համակազմն է պարունակում նաև Արթիկի № 433 դամբանը: **Хачатрян Т.,** 1979, с. 302.

[48] Ըստ խեթախաթական «արքայական» թաղման ծեսի՝ Պիրվային նվիրված արարողությունների ժամանակ զոհաբերվում էր ձի, ապա թագավորի կամ թագուհու մահվան դեպքում խուց էր դրվում միայն ձիու գանգը: Տե՛ս **Иванов В.** Использование этимологических исследований сочетаний однокоренных слов в поэзии на древнеиндоевропейских языках (Этимология, М., 1969, с. 40-55): Ուշագրավ է, որ Լճաշենի մի շարք դամբաններում կառքի մոտ փաստագրվել են միայն ձիերի գանգեր: Мнацаканян 1957, с. 146-148; **Ավետյան Վ.,** էջ 58-66: Կառքի, արքայական իշխանության և այլ հարցերի համար տե՛ս **Kristiansen K.** Kontakte und Reisen im 2. Jahrtausend v. Chr. // Rad und Wagen, Der Unsprung einer Inovation Wagen im Vorderen Orient und Europa, Oldenburg, 2004, 443-454:

[49] **Есаян С.** Оружие и военное дело в Древней Армении (III-I тыс. до н.э.), Е., 1966, с. 140-143.

գաղափարական փոփոխություններն են, երբ հանրույթներն արդեն յուրացրել էին որոշակի տիրույթներ, բնական պաշարներ, տեխնիկատեխնոլոգիական հնարքներ՝ հանգեցնելով մշակույթի թռիչքային զարգացմանը: Տեղի է ունենում սոցիալական շերտավորման գործընթացի դանդաղեցում: Սկսում է նվազել իշխանությունը թաղման ծեսում ցուցադրելու անհրաժեշտությունը, և առանձնաշնորհ կարգավիճակ ենթադրող անձանց թաղումներում այլևս չի դրվում նյութական հարստության այնպիսի շքեղ տեսականի, ինչպիսին ընդունված էր նախորդ դարաշրջաններում: Սակայն հասարակությունը ոչ միայն պահպանում է փոխադրամիջոցների պատրաստման մասին գիտելիքները, այլև մեծ թափ է հաղորդում ձիաբուծությանը՝ սկսած մ.թ.ա. XII-XI դարերից[50]:

Կարծում ենք, հասարակությունը շարունակում է պահպանել անվավոր փոխադրամիջոցների մասին ունեցած պատկերացումները, սակայն տնտեսական և մշակութային ներուժը կենտրոնացնում է արդեն ոչ թե ծիսական արարողությունների վրա, այլ ամրաշինության, մետաղագործության, խեցեղենի մեծ ծավալների հասնող արտադրության և այլ պրակտիկ գործողությունների վրա: Այդ պատճառով է, որ քննվող ժամանակաշրջանի անվավոր փոխադրամիջոցներ պարունակող դամբանների մեջ առանձնանում են pars pro toto սկզբունքով կատարված թաղումները, որտեղ ամբողջական սայլի կամ կառքի փոխարեն դրված է վերջինիս պատկանող մասերից (շտանդարտ, արձանիկ, ճ-աձև իրեր և այլն) կամ այն խորհրդանշող իրերից (անիվի կամ սայլի մանրակերտ, սանձ, փայտ և այլն): Ամբողջական փոխադրամիջոցին փոխարինում են հիմնականում բրոնզե արձանիկները՝ «բրոնզե շտանդարտներ»[51]: Ընդունված է, որ բրոնզե շտանդարտները կապված են սոցիալական հերալդիկայի կամ որևէ աստվածության պաշտամունքի հետ, որը համարվում է այս կամ այն ընտանիքի, խավի կամ տոհմի հովանավորը[52]: Հայտնի հրատարակված շտանդարտներից միայն երեքն են հանդես գալիս pars pro toto սկզբունքով

[50] Փոխադրամիջոցների մասին վկայություններն սկսում են կրկին ի հայտ գալ մ.թ.ա. IX դարից: **Есаян С.,** նշվ. աշխ., էջ 140-142:

[51] **Shanshashvili N., Narimanishvili G., Narimanishvili G.** Trade and Trade Roads between South Caucasus and Near East, Tbilisi, 2006, p. 135-138.

[52] **Shanshashvili N.** et. all., p. 135.

կատարված թաղումներում (Արթիկ - 3, Վերին Նավեր - 14, Քուչակ - 31)[53]: Արթիկի № 3 դամբանից հայտնի է խարսխաձև պատվանդանով մի իր, որը առաջավորասիական սրի և այլ իրերի հետ մեկտեղ հայտնաբերվել է աճյունի կրծքավանդակի մոտից[54]: Այն խարսխաձև պատվանդանի տեսք ունի, որի կողային երկու ձողերի միացումով առաջացող բարձր վզի վերին հատվածում ավարտվում է երկու աչքեր հիշեցնող խողովակներով (աղ. III, 3):

Խցում փաստագրվել է արտեֆակտների հետաքրքիր համակազմ[55], որը հիշեցնում է Լճաշենում Հ. Մնացականյանի 1957 թ. պեղած № 5 դամբանաբլուրի նյութերը[56]: Լճաշենի քննվող դամբանում գտնվել է երկանիվ կամարակապ, երկու ձիերով լծված մի սայլ, որի վրա նստած դիրքով թաղվել է մի տղամարդ[57]: Սայլի առեղների երկարությունը հասնում էր 4.5 մետրի, իսկ անիվների տրամագիծը՝ 1.5մ: Խցում չի փաստագրվել լուծը, փոխարենը առկա էր լծին ամրացվող ծիսական շտանդարտը: Շտանդարտը, ինչպես և Արթիկի օրինակը, խարսխաձև պատվանդանի վրա է: Քննվող արձանիկը, ի տարբերություն Արթիկի օրինակի, ձողի կտրվածքում քառակուսի է (աղ. III, 4): Երկու օրինակների չափերը հասնում են 17-19սմ-ի: Գույքի կրկնվող համակազմով ներկայացված այս երկու համալիրները մեր կարծիքով ներկայացնում են կարգով իրար համարժեք թաղումներ, մի դեպքում, սակայն խուց դրվել է ամբողջական երկանիվ սայլը, մյուս դեպքում՝ վերջինիս փոխարինող (խորհրդանշող) մասը՝ շտանդարտը: Ի դեպ, պետք է նշել, որ ինչպես քննվող շտանդարտը, այնպես էլ Լճաշենի № 5 դամբանի սայլը տարբերվում են Լճաշենում հայտնի երկանիվ սայլերից: Քննվող օրինակն ունի կամարաձև ծածկ, որի թափքի շրջանակի կողքերից յուրաքանչյուրի վրա յոթ տեղով ամրացված են բարակ փայտեր: Սրանք, անցնելով կողային համապատասխան անցքերի միջով, առաջացրել են կամար: Այն երեսպատված է եղել գործվածքով

[53] **Хачатрян Т.,** 1979, с. 110; **Սիմոնյան Հ.,** 2006, 104; **Պետրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 134:

[54] **Хачатрян Т.,** 1963, с. 25-26: Նշվում է, որ, դատելով կոճակների դասավորությունից և պահպանված կաշվի մնացորդներից, այս աճյունի վրա եղել է զրահաշապիկ:

[55] **Хачатрян Т.,** 1979, с. 110.

[56] **Մնացականյան Հ.,** էջ 107-108; **Ավետյան Վ.,** նշվ. աշխ., էջ 60, աղ. XXXIII, 4:

[57] **Մնացականյան Հ.,** նույն տեղում:

կամ կաշվով (աղ. III, 6)[58]: Թ. Խաչատրյանը այս դամբանը ժամանակագրում է ուշ բրոնզի իր թվագրությամբ վաղ փուլով՝ մ.թ.ա. XIV-XIII դարերով, իսկ Ա. Փիլիպոսյանը՝ մ.թ.ա. XV դարով[59]:

Իրենց կառուցվածքով յուրահատուկ այս արձանիկները հեռավոր կերպով հիշեցում են ուբեյդյան դարաշրջանից Թել Բրաքի «Աչքի տաճարից» հայտնի «Աչքի կուռքերին», որոնք, ինչպես և մեր օրինակները, մարդակերպ են, ունեն հստակ արտահայտված խողովակաձև աչքեր[60]: Աչք հիշեցնող քարեր, արձանիկներ և խեցանոթների վրա դրվագված կամ քանդակված պատկերները հայտնի են դամբանային համալիրներից եվրասիական ընդարձակ տարածքներում: Վերջիններիս կիրառության վերաբերյալ նշվում է, որ սրանք չար աչքը խափանող (պահպանիչ), պտղաբերությունը ապահովող հմայիլներ են, որոնք ներկայացնում են կամ Արևի կամ Լուսնի աստվածուհուն[61] (աղ. III, 5):

Հայաստանից հայտնի քննվող առարկաները ոչ թե պետք է գենետիկորեն կապել Միջագետքից և այլ տարածքներից հայտնի նմանօրինակ զուգահեռների հետ, այլ պետք է ընդամենը համեմատության եզրեր գտնել զուտ կիրառության ոլորտում: Հետևաբար կարծում ենք, որ քննվող երկու շտանդարտները պտղաբերությունը խորհրդանշող, չարխափան ինչ-որ աստվածության խորհրդանիշ են[62]: Այն, որ այս շտանդարտները պատրաստվել են աչքի խորհրդով, փաստում է նաև Հ. Մարտիրոսյանի՝ Արթիկի № 3 դամբանի շտանադարտի մասին կողային մի վկայություն, ըստ որի՝ վերջինիս աչքեր հիշեցնող խողովակները ինկրուստավորված են եղել կանաչ քարով[63]:

Pars pro toto սկզբունքի հետաքրքիր օրինակ է Քուչակի № 31 դամբանը, որը չուներ արտաքինից տարբերվող կառույց: Հիմնահողային խցի արևմտյան պատի դիմաց դրված էին տարատեսակ խեցանոթներ, իսկ

---

[58] **Մնացականյան Հ.,** էջ 108:

[59] **Хачатрян Т.,** 1975, с. 176-180; **Փիլիպոսյան Ա.,** Հին Արևելքի շրջանակավոր դաստակով դաշույններն ու սրերը, Ե., 1999, էջ 18-19, աղ. 32, 6:

[60] **Mallowan L.** Excavations at Brak and Chagar Bazar // Iraq 8 (1947), p. 1-259.

[61] **Müller-Klieser J.** Augensteine im 3. und frühen 2. Jahrtausend v. Chr.: Eine Funktionsanalyse // Materiality of Writing in Early Mesopotamia (Materiale Textkulturen), Book 13, de Gruyter, Berlin/Boston, 2016, p. 133-164.

[62] **Becker A.** Uruk: Kleinfunde I (Stein), DAI, Abteilung Baghdad, Mainz am Rhein, 1993, Taf. 2, p. 9-12.

[63] **Мартиросян А.**, 1964, 107, рис. 47, 5.

արևելյան կողմում արված էր գաղտնարան, որտեղ գտնվեց անվակաձև այտաճանով սանձ, նիզակի ծայր, երեք թռչունների՝ խարսխաձև պատվանդանի վրա դրված արձանիկ: Այս ամենը դրված էր փայտի փոքր



Քարտեզ 1



Աղյուսակ 2



Աղյուսակ 3

Քարտեզ 1. Մ.թ.ա. II հազարամյակում Եվրասիայում, Լևանտում և Հարավային Կովկասում կառքերի համատեքստում փաստագրվող ձիասանձերի երեք հիմնական տիպերը (քարտեզը՝ Kristiansen 2004, Abb. 3, վերամշակումը՝ Վ.Բ.)

Աղյուսակ 2. Անվավոր փոխադրամիջոցների ուղեկցությամբ դամբաններում զոհաբերված կենդանիների տեսականին

Աղյուսակ 3. 1. Լճաշեն-10 (ՀՊԹ ՀՆ 2049/89), 2. Գեղարոտ-3 (Badalyan, Smith 2017, Fig. 9), 3. Արթիկ-3 (Փիլիպոսյան 1999, աղ. 32, նկ. 6), 4. Լճաշեն-V (Պետրոսյան 2018, աղ. 144, նկ. 1), 5. Թել Բրակ (Mallowan 1947, Fig. 2-3), 6. Լճաշեն-V երկանիվ սայլ (Ավետյան Վ. 2003, աղ. 32, նկ. 4)

կտորի և ձիու գանգի մոտ: Ինչպես նշում է Լ. Պետրոսյանը, այստեղ կիրառվել է մասն ամբողջով փոխարինելու սկզբունքը[64], այսինքն՝ այս դամբանում փայտի, ձիու և անվակաձև այտաճանով սանձի առկայությունը խորհրդանշում էր ձիով լծված երկանիվ սայլը:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, փոխադրամիջոցի pars pro toto-ի սկզբունքով փաստագրված դամբաններում բուն փոխադրամիջոցի բացակայությունը պայմանավորված պետք է լինի ոչ թե տվյալ համայնքի սոցիալական վերակարգությունում Լճաշենի, Լոռի Բերդի, Գեղարոտի կամ Վերին Նավերի I և II կարգի[65] դամբաններին համապատասխանող անձանց թաղումների բացակայությամբ, այլ թաղման խցի կառուցվածքով, ժամանակաշրջանով, ինչպես նաև հոգևոր պատկերացումներով:

ԱՆՎԱՎՈՐ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՈՒՇ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԹԱՂՈՒՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԿՈՒՐԱՐԱՔՍՅԱՆ ՄԻՋԱԳԵՏՔՈՒՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ Բ.Վ.

Ամփոփում

Ուշ բրոնզի վաղ փուլում կուրարաքսյան Միջագետքում անվավոր փոխադրամիջոցների կամ դրանց փոխարինող մասերի ուղեկցությամբ, սոցիալական որոշակի ծանրաբեռնվածություն ունեցող դամբաններում (n=41) փաստագրվել է տղամարդկանց 21, կանանց՝ 3, երեխաների՝ 3 աճյուն: Քառանիվ և երկանիվ սայլերը լծված են եղել խոշոր եղջերավոր անասուններով, իսկ երկանիվ կառքերը՝ ձիերով: Հայտնի է նաև եղջերուներով լծված քառանիվ սայլի օգտագործում: Երկանիվ կառքերի հետ փաստագրվել են նաև անվակաձև այտաճանով բրոնզե սանձեր, որոնք

[64] **Պետրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 134: Արձանիկը պատկերը՝ **Pizchelauri K.**, Die zentraltranskaukasiche archäologische Kultur des 14-13. Jh. v. Chr. (Kulturwesen, Charaktermerkmale, Verbreitungsareale), die Georgische Akademie der Wissenschaften, Archäologisches Forschungszentrum, Tbilisi, Tab. CCXXXIII:

[65] Տե՛ս **Վարդանյան Բ.,** Հին Հայաստանի ուշ բրոնզի դարաշրջանի դամբանային համալիրների սոցիալ-ժողովրդագրական և սեռատարիքային վերլուծությունների խնդիրներն ըստ Լճաշենի դամբանադաշտի» (ՀԱԻ աշխատություններ, Ե. (In Press):

իրենց զուգահեռներն ունեն համաժամանակյա արտատարածաշրջանային մի շարք հուշարձաններում: Ուշ բրոնզի երկրորդ փուլում և վաղ երկաթի դարաշրջանում այլևս չեն փաստագրվում ամբողջական անվավոր փոխադրամիջոցներ, փոխարենը խուց էին դրվում դրան խորհրդանշող մասերը (շտանդարտ, սանձ, ձի և այլն): Առանձնակի հիշատակելի են Լճաշենի № 5 և Արթիկի № 3 ՈՒԲԴ դամբաններից հայտնաբերված աչքաձև բրոնզե շտանդարտները, որոնք արտաքին կառուցվածքով հիշեցնում են չարխափան գործառույթ ենթադրող «Աչքի կուռքերին»:

Բանալի բառեր՝ ուշ բրոնզի դար, անվավոր փոխադրամիջոցներ, սոցիալական կառուցվածք, էլիտա, իշխանության խորհրդանիշ, շտանդարտ, սանձ:

ВОПРОСЫ СОЦИАЛЬНО-ДЕМОГРАФИЧЕСКОГО ИССЛЕДОВАНИЯ ПОЗДНЕБРОНЗОВЫХ КОЛЕСНИЧНЫХ ПОГРЕБЕНИЙ В КУРО-АРАКССКОМ МЕЖДУРЕЧЬЕ

ВАРДАНЯН Б.В.

Резюме

В позднебронзовых погребениях Южного Кавказа были обнаружены образцы колесного транспорта, число которых доходит до 36 (табл. 1). В этих погребениях были найдены скелеты мужчин (67%) в возрасте от 18 до 50 лет, а число женских и детских погребений составляет всего 3(7%). В Южном Кавказе в эпоху поздней бронзы двух- и четерехколесные повозки запрягались крупным рогатым скотом, а колесницы – лошадьми (табл. 2): Имеются археологические данные о том, что ритуальные повозки запрягались также оленями (Ханлар, Гараджамирли). В начале позднебронзового века были распространены дисковидные удила, далекие аналогии которых известны из Леванта и Ближнего Востока. Экземпляры из Южного Кавказа являются образцами местного производства. В некоторых погребениях транспортные средства были заменены их символами (pars pro toto). Уникальные бронзовые штандарты из погребения Артик № 3 и Лчашен № 5, привязанные к колесницам, символизировали плодо-

родие и защиту от сглаза. Все гробницы с повозками принадлежали разным сословиям элиты этого периода (табл. 3, 3-5).

Ключевые слова – позднебронзовый век, колесный транспорт, социальная структура, элита, символ власти, штандарты, удила.

THE SOCIAL-DEMOGRAPHICAL RESEARCH OF CHARIOT-BURIALS IN THE SOUTH CAUCASUS DURING THE LATE BRONZE AGE

B. VARDANYAN

Abstract

During the early stages of the Late Bronze Age in the South Caucasus, tombs with vehicles' wheels have been found (chariots and wagons). In this tombs there are usually skeletons of 15-50 year old men. 18-30 age old female skeletons have been found only with skeletons of men or children. In these area two-wheeled and four-wheeled chariots were drawn by cattle and two-wheeled chariots were drawn by horses. There is some evidence about four-wheeled chariots, that were drawn by deer (Khanlar, Gharajamirli). In early stage of the Late Bronze Age some disk-shaped bits were found, which are similar to some bits from Southwestern Asia and are local products. In some thombs vehicles were replaced with their symbols (pars pro toto). Standards from Artik Tomb №3 and Lchashen Tomb № 5 were fixed to chariots and symbolized fertility and protection. All tombs with vehicles belonged to the elite of this period.

Key worts – Late Bronze Age, wheeled vehicle, social structure, insignia, elite, symbol of power, standart, bits.